## ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱՄԷՔ ԳՀԱՊՁԲ 18/4

«07» հունիս 2018 թ.

ք. Էջմիածին

Կարեն Գրիգորյանի, որը գործում է Էջմիածնի քաղաքապետարանը ի դեմս <Կոմպլենդ> ՍՊԸ-ն, ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Գնորդ, մի կողմից, և կանոնադրության հիման վրա, դեմս տնօրեն Խաչիկ Թովմասյանի, որը գործում է պայմանագիրը հետևյալի այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

(այսուհետ՝ պայմանագիր)

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝** ժամկետում Վաճառողի կողմից

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց,

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

**Լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն

ած գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ
րց ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն
ականորեն խախտել է պայմանագիրը·

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել
Գնորդի համար ընդունելի ժամկետում·
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ
տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի
ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու
դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին
անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված
ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա
գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով
նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները
խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո
անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի
համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի
բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո
Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված
վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված
ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն
էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը ապրանքի համար վճարելու ժամկետները
բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին
և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք
պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով
տրամադրել ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված
փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված
կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան
պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետու
տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանությա
ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապվա
անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6
կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխա
փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդի
հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքու
լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապե
գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **281800/երկու հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր** / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատե՛սված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ____**365/երեք հարյուր վաթսունհինգ**/____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում Վաճառողը պարտավոր է իր հաշվին[2] վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ ներառյալ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, միայն այն հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված

---

[1] Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

[2] Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների
աժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը իր կողմից ստորագրված հանձնման-
ակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-
գունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և
6.1 Վաճառողը պատասխանատվություն կրում ժամկետների պահպանման համար:
պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման մատակարարման
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված օրվա համար
ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված ապրանքի գնի
գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի
0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող
ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք[3]
պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը
հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման
համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է
տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ
հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց
պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար
պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց
պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

ամբողջությամբ կամ մասնակիորեն
Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն
չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է
անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը
կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և
արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները,
հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների
ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով
պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը
շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք
ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կողմերի ստորագրման պահից և գործում է
8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է
մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով
կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների
կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության
կողմից հաշվառված լինելու հանգամանքը[4].
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող
դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց
կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած
պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր
համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների
կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների
քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով
կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը
ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս
ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի
Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը
իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված

---

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

...ումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների ...րն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք ...անդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում ...յմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող ...նասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի ...անրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի ...րած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[5]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանի լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[6]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

---

5 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

6 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ղմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am
ցենով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու ամսաթիվը: Վաճառողը,
ին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման համարվում է պատշաճ
մանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, հրապարակվելուն հաջորդող
ուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված լուծվում են
վանից: ծագած վեճերը

8.12 Պայմանագրի կապակցությամբ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը
նակցությունների միջոցով: Համաձայնություն

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն
ուծվում են դատական կարգով: յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական
վասարազոր իրավաբանական ուժ, հավելվածները, համարվում են պայմանագրի
ինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 նկատմամբ կիրառվում է
բաժանելի մասը: հարաբերությունների

8.14 Պայմանագրի հետ կապված իրավունքը: մատակարարումն իրականացվում է
յաստանի Հանրապետության ապրանքների և դրա հիման վրա կողմերի

8.15 Պայմանագրով նախատեսված առկայության Պայմանագիրը լուծվում է,
դ նպատակով ֆինանսական միջոցների կնքման միջոցով: այդ նպատակով
իջև համապատասխան համաձայնագրի ընթացքում վեց ամսվա նախատեսվում: Ընդ որում,
թե այն կնքելու օրվան հաջորդող միջոցներ չեն ներկայացնում է համաձայնագիր
պայմանագրի կատարման համար ֆինանսական և Գնորդին աշխատանքային օրվա
Վաճառողը համաձայնագիրը կնքում տասնհինգ միակողմանիորեն
կնքելու ծանուցումը ստանալու օրվանից Գնորդի կողմից
ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը
լուծվում է:[7]

և

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները
ստորագրությունները

**ՎԱՃԱՌՈՂ**
<Կոմպլենդ> ՍՊԸ
ք. Երևան
<Ինեկո Բանկ> ՓԲԸ
Հ/Հ 2050622025981001
ՀՎՀՀ 00875953
Տնօրեն՝ Խ. Թովմասյան

**ԳՆՈՐԴ**
Էջմիածնի քաղաքապետարան
ք. Էջմիածին Մաշտոց 0
Վաղարշապատի ՏԳԲ
Հ/Հ 900322201030
ՀՎՀՀ 04708275
Էջմիածնի քաղաքապետ՝
Կ. Գրիգորյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ
օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[7] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՀՀ դրամ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | Ապրանքի | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 30211220 | Սեղանի համակարգիչ | | Mother Board ASUS H11 կամ համարժեք, Պրոցեսորի հզորությունը` Intel G4400 կամ համարժեք, Cooler LGA 1155 կամ համարժեք, Օպերատիվ հիշողության ծավալը 4GB PC1600, Հիմնական հիշողության ծավալը` 500GB, Առնվազն 4 USB բնիկի առկայություն, Monitor LG 20 կամ համարժեք, Case Keyboard Mouse | հավաքածու | 165000 | 165000 | 1 | ք. Էջմիածին | 1 | հունիս |
| 2 | 30232231 | Արտաքին կոշտ սկավառակ | | 2TB | հատ | 45996 | 45996 | 1 | ք. Էջմիածին | 1 | հունիս |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հատ | 24000 | 24000 | 1 | Ք, Էջմիածին | 1 | |
| 3 | 30232231 | Ներքին կոշտ սկավառակ | | Հիմնական հիշողության ծավալը՝ 500GB | հատ | 23400 | 46800 | 2 | Ք, Էջմիածին | 2 | հուն[illegible] |
| 4 | 31151120 | Անխափան սնուցման սարք | | Ելքային հզորություն 850W, մուտքային նլարում՝ 220 Վ, առցանց մուտքային էլեկտրաէներգիայի մատակարարման՝ աշխատելու տևողությունը առնվազն 8 րոպե | | | | | | | |

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Էջմիածնի քաղաքապետարան<br>ք. Էջմիածին Մաշտոց 0<br>Վաղարշապատի ՏԳԲ<br>Հ/Հ 900322201030<br>ՀՎՀՀ 04708275<br>Էջմիածնի քաղաքապետ՝<br>Կ. Գրիգորյան<br>------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | «Կոմպլենդ» ՍՊԸ<br>ք. Երևան<br>«Ինեկո Բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2050622025981001<br>ՀՎՀՀ 00875953<br>Տնօրեն՝ Խ. Թովմասյան<br>------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

Հավելված
« » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՄԷՔ ԳՀԱՊՁԲ 18/4 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30211220 | Սեղանի համակարգիչ | --- | --- | --- | --- | --- | 165000 | 165000 | 165000 | 165000 | 165000 | 165000 | 165000 | 165000 |
| 2 | 30232231 | Արտաքին կոշտ սկավառակ | --- | --- | --- | --- | --- | 45996 | 45996 | 45996 | 45996 | 45996 | 45996 | 45996 | 45996 |
| 3 | 30232231 | Ներքին կոշտ սկավառակ | --- | --- | --- | --- | --- | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 4 | 31151120 | Անխափան սնուցման սարք | --- | --- | --- | --- | --- | 46800 | 46800 | 46800 | 46800 | 46800 | 46800 | 46800 | 46800 |

* Վճարման ենթակագումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:

** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Էջմիածնի քաղաքապետարան | <Կոմպլենդ> ՍՊԸ |
| ք. Էջմիածին Մաշտոց 0 | ք. Երևան |
| Վաղարշապատի ՏԳԲ | <Ինեկո Բանկ> ՓԲԸ |
| Հ/Հ 900322201030 | Հ/Հ 2050622025981001 |
| ՀՎՀՀ 04708275 | ՀՎՀՀ 00875953 |
| Էջմիածնի քաղաքապետ | Տնօրեն Ն. Թովմասյան |
| Կ. Գրիգորյան | |
| ---------------- | ---------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |